«ՍԱՐՎՈՐ ՏՈՒՐԻԶ»-Ը ՈՐՊԵՍ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 338.48
DOI 10.56246/18294480-2022.12-13

ՄԿՐՏՉՅԱՆ ԼԱԼԱ
Գավառի պետական համալսարանի դասախոս
էլփոստ՝ l.mkrtchyan@gsu.am

«Սարվոր տուրիզմ»-ը հայաստանյան շուկայում փորձարարական զբոսաշրջության դեռևս եզակի տեսակ է, որի շրջանակներում զբոսաշրջիկները կարողանում են իրենց հանգիստը կազմակերպել սարվորների՝ սարերում ժամանակավորապես ապրող անասնապահների մոտ, ծանոթանալով նրանց կյանքին ու կենցաղին:

Աշխատանքի ընթացքում նկարագրվել է «Սարվոր տուրիզմ»-ի ստեղծման և զարգացման պատմությունը, հիմնական գործունեությունը:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել «Սարվոր տուրիզմ»-ը որպես զբոսաշրջային նոր ուղղություն: Չնայած այն բանին, որ զբոսաշրջային այս ուղղությունն արդեն 3 տարի գործում է, այնուամենայնիվ բնակչության մեծամասնությունն անտեղյակ է դրանից: Շատերին անգամ անծանոթ է «սարվոր» բառը: Այդ պատճառով «Սարվոր տուրիզմ»-ի մասին տեղեկատվությունը կարող է նպաստել զբոսաշրջության այս յուրահատուկ, հետաքրքիր, անվտանգ ու կարևոր տեսակի զարգացմանը:

Այսպիսով, «Սարվոր տուրիզմ»-ը՝ որպես հայաստանյան շուկայում այլընտրանքային զբոսաշրջային արտադրանք, ունի մեծ հնարավորություն՝ զբոսաշրջային հոսքերի ներգրավման համար, որն էլ կարող է նպաստել տարածաշրջանի զարգացմանը՝ չխախտելով բնական միջավայրի հավասարակշռությունը: Այն ունի սոցիալական, բնապահպանական և մի շարք այլ բաղադրիչներ և նպաստելու է.

- ***Գավառի տարածաշրջային զբոսաշրջային ներուժի բացահայտմանն ու տարածմանը, տարածաշրջանում զբոսաշրջային հոսքերի ավելացմանը, տարածաշրջանի զարգացմանը: Ըստ «Սարվոր տուրիզմ»-ի կայքի և դիմագրքյան էջի՝ Գավառի տարածաշրջանի զբոսաշրջային ներուժն արդեն բացահայտված ու ներկայացված է: Սակայն այդ գործըն-***

թացը դեռ ընթացքի մեջ է, քանի որ դեռևս կան բազմաթիվ հետաքրքիր ու չբացահայտված վայրեր:

- ***Սարվորների արտադրանքի իրացմանը, նրանց ֆինանսական հոսքերի ավելացմանը:***
- ***Տարածաշրջանի վարպետների՝ խաչքարագործ, դարբին, գորգագործ, փիկնիկագործ, հրուշակագործ, խոհարար և այլ մասնագիտության տեր մարդկանց բացահայտմանը, վարպետաց դասերի կազմակերպմանը, ազգայինի պահպանմանն ու տարածմանը՝ նպաստելով նաև նրանց ֆինանսական հոսքերի ավելացմանը:***
- ***Բնական միջավայրի պահպանությանը:***

Բանալի բառեր՝ *«Սարվոր տուրիզմ», էկոտուրիզմ, ագրոտուրիզմ, էքստրեմալ տուրիզմ, գիշերակաց, արշավներ, «Ջայլո տուրիզմ», զբոսաշրջային ներուժ:*

Աշխատանքի արդիականությունը:Աշխատանքն արդիական է, քանի որ այստեղ ներկայացված է զբոսաշրջային նոր ուղղություն՝ «Սարվոր տուրիզմ»-ը, որի մասին դեռ շատերը չգիտեն, և զբոսաշրջության այս տեսակը կարող է զարգանալ ոչ միայն Գեղարքունիքի մարզում, այլև ՀՀ մյուս մարզերում:

Տնտեսության բոլոր հատվածների նորարարության հիմքը գիտական և տեխնոլոգիական առաջընթացն է: Զբոսաշրջությունը սոցիալ - տնտեսական գլոբալ երևույթ է՝ գործելով երբեմն կոշտ մրցակցության պայմաններում, բնութագրվելով նորարարական գործընթացին բնորոշ բարձր աստիճանով:

Զբոսաշրջության ոլորտում նորարարական գործունեության հիմնական ուղղություններն են.

- տուրիստական նոր ապրանքների արտադրություն՝ սննդի արտադրություն, հյուրանոցային ծառայություններ և այլն,
- ավանդական արտադրանքի արտադրության համար նոր տեխնոլոգիաների օգտագործում,
- նախկինում չօգտագործված ռեսուրսների օգտագործում (օրինակ՝ զբոսաշրջիկների ճամփորդություն տիեզերանավերով և այլն),
- փոփոխություններ,

- ապրանքների նույնականացում և շահագործման նոր շուկաներ (հյուրանոցային և ռեստորանային ցանցեր):

Արդյունաբերական ժամանակաշրջանին, երբ հիմնական արժեքները նյութական հաջողություններն էին, փոխարինելու է գալիս հետինդուստրիալ ժամանակաշրջանը, որի գլխավոր նպատակն են հանդիսանում տպավորությունը և զգացողությունը:

Գիտատեխնիկական առաջընթացը ուղեկցվում է տեղեկատվության զարգացմամբ: Տեղեկատվությունը հանդիսանում է տնտեսության արտադրողականության, մրցակցության բարձրացման միջոց[1]:

Հետինդուստրիալ հասարակարգում ծառայությունների գերակայությունը թույլ է տալիս օգտագործել «սերվիսային տնտեսություն» եզրույթը[2]:

Տարեցտարի աշխարհում ավելանում են զբոսաշրջային նոր ուղղությունները և տեսակները, զբոսաշրջիկները նոր տպավորությունների, յուրահատուկ վայրեր բացահայտելու կարիք են զգում, որն էլ նպաստում է զբոսաշրջության անընդհատ ընդլայնմանը:

Վերջին տասնամյակներում գիտատեխնիկական առաջընթացը մուտք է գործել մարդկանց կյանքի համարյա բոլոր ոլորտներ՝ մարդկանց զրկելով բոլոր տեսակի ֆիզիկական ակտիվությունից: Դրա հետևանքով մարդկանց մոտ առաջանում են բազմաթիվ ֆիզիկական և զգայական բնույթի խնդիրներ: Այդ պատճառով էլ մարդիկ, մեծ կարևորություն տալով իրենց հանգստին, ցանկանում են, որ այն լինի ոչ միայն հետաքրքիր, այլ նաև օգտակար առողջական վիճակի բարելավման տեսանկյունից: Այս դեպքում մարդկանց այն խմբերը, որոնք հոգնել են իրենց պասիվ, քիչ շարժուն կենսակերպից, աշխատում են այդ բացը լրացնել իրենց հանգստի ժամանակ՝ ընտրելով ակտիվ զբոսաշրջությունը:

Այդպիսի նորարական և ակտիվ հանգստի տեսակներից է վերջին տարիներին Գեղարքունիքի մարզում գործող «Սարվոր տուրիզմ»-ը:

«Սարվոր տուրիզմ»-ը հայաստանյան շուկայում փորձարարական զբոսաշրջության դեռևս եզակի տեսակ է, որի շրջանակներում զբոսաշրջիկները կարողանում են իրենց հանգիստը կազմակերպել սարվորների՝ սարերում ժամանակավորապես ապրող անասնապահների մոտ՝ ծանոթանալով

---

[1] Кастельс М., Информационная эпоха экономике общество и культуре. М.: ГУ ВШЭ 2000, с. 81

[2] Бурменко Т., Даниленко И., Туренко Т., Сфера услуг в современном обществе: Экономика мененджмент и маркетинг, М., 2004, с. 18

նրանց կյանքին ու կենցաղին: Զբոսաշրջության այս ճյուղը Գեղարքունիքի մարզում սկսել է զարգանալ 2019 թ.-ից, որի հիմնական նպատակն էր Գավառի տարածաշրջանի զբոսաշրջային ներուժի բացահայտումը, հանրայնացումը, զբոսաշրջային բազայի ստեղծումը, ինչն էլ նպաստելու էր տարածաշրջանում զբոսաշրջային հոսքերի ավելացմանը, տարածաշրջանի զարգացմանը:

Գավառը և հարակից համայնքներն ունեն շատ մեծ պոտենցիալ՝ զբոսաշրջության զարգացման համար: Լեռնային ռելիեֆը, մաքուր օդը, ջինջ ու սառնորակ աղբյուրները, ալպյան մարգագետինները, անարատ սնունդը կարող են նպաստել հատկապես ագրո, էկո և արկածային զբոսաշրջության զարգացմանը: Եթե այս ամենին էլ ավելացնում ենք սարվորների՝ սարերում ժամանակավորապես ապրող անասնապահների պարզ ու հասարակ կյանքն ու կենցաղը, ապա անհրաժեշտ էր դառնում զբոսաշրջության այս նոր տեսակի՝ «Սարվոր տուրիզմ»-ի զարգացումը, որը նպաստելու է ոչ միայն Գավառի տարածաշրջանի լեռնային տարածքների վիթխարի զբոսաշրջային ներուժի յուրովի ներկայացմանը, նաև լեռնային անաղարտ բուսականության պահպանմանը:

Ի՞նչ է իրենից ներկայացնում «Սարվոր տուրիզմ»-ը: Հայաստանում փորձարարական զբոսաշրջության եզակի տեսակ, որն առաջին անգամ զբոսաշրջիկներին առաջարկում է կիսել սարվորների առօրյան, նրանց հետ ապրել սարերում, ծանոթանալ նրանց կենցաղին և ոչ միայն:

Այն իր գործունեությունը ծավալում է Գեղարքունիքի մարզի Գեղամա լեռներում:

Ի՞նչ է տալիս «Սարվոր տուրիզմ»-ը: Գեղատեսիլ բնություն, լիցքաթափում, սարվորների առօրյայի հետ ծանոթացում, նոր ու անսովոր զբաղմունք փորձելու հնարավորություն, սա հենց այն է, ինչ անհրաժեշտ է մարդուն լիակատար հանգստի, ուժերի վերականգնման և նոր զգացողությունների համար:

«Սարվոր տուրիզմ»-ը զբոսաշրջության առավել ապահով տեսակ է: Այն առաջարկներ ունի ընտանիքի բոլոր անդամների համար:

- «Սարվոր տուրիզմ»-ի գործունեության որոշ վայրերում բացակայում է հեռախոսակապը և համացանցը՝ նպաստելով մարդկանց լիարժեք լիցքաթափմանը.
- «Սարվոր տուրիզմ»-ի գործունեության ընթացքում սարվորների համար տպագրվել են ճաշացանկեր, որոնց հիման վրա զբոսաշրջիկները կա-

րող են պատվիրել իրենց նախընտրած կերակուրը, որը կմատուցվի սարվորների կողմից: Սնունդը հիմնականում ներառում է տարածաշրջանին բնորոշ ուտեստները:

- Չնայած այն բանին, որ «Սարվոր տուրիզմ»-ի գործունեության վայրերում բացակայում են հիգիենայի պահպանման վայրերը, դրանց բացը լրացնում են ցնցուղ-վրանները, որտեղ զբոսաշրջիկները կարող են իրենց կարգի բերել:
- Շրջագայության օրերի թիվը նախապես է հստակեցվում: «Սարվոր տուրիզմ»-ն առաջարկում է 1-ից 7-օրյա տուրեր:

«Սարվոր տուրիզմ»-ն իրենից ներկայացնում է զբոսաշրջային այնպիսի տեսակ, որը միավորում է զբոսաշրջության ռեկրեացիոն, բուժա-վերականգնողական /հանքային ջրերի առկայությունը, մաքուր օդը, աղմուկից հեռու և անաղարտ բնությունը և այլն/, կրոնական /ուխտագնացություն դեպի Սբ. Խաչ և այլ սրբավայրեր/, ագրո, էկո, արկածային, գիտական, էքսկուրսիոն-ճանաչողական և էքստրեմալ /լեռնագնացություն, ժայռամագլցում, լեռնային հեծանվաարշավ, ձիարշավ և այլն/տեսակները: «Սարվոր տուրիզմ»-ն աղերսներ ունի նաև էթնոտուրիզմի հետ: Սակայն, ի տարբերություն էթնոտուրիզմի, «Սարվոր տուրիզմ»-ն առաջարկում է ծառայությունների ավելի մեծ փաթեթ:

«Սարվոր տուրիզմ»-ն առաջարկում է.

- զբոսաշրջիկների դիմավորում մեկնարկային կետից /օդանավակայանից, Երևանի Հանրապետության հրապարակից, Գավառի կենտրոնական հրապարակից՝ ըստ նախապես պայմանավորվածության/,
- տեղափոխում դեպի սարվորների բնակատեղիներ,
- կեցության ապահովում ընտրված վայրերում՝ 1-7 օրյա ժամկետով՝ ըստ նախապես առաջարկած պլանի,
- արշավների կամ էքսկուրսիայի կազմակերպում,
- լեռնամագլցում, ժայռամագլցում,
- վարպետաց դասերի անցկացում,
- թռչնադիտում,
- խարույկ, փուռ, փռի կարտոֆիլ,
- ազգային երգեր, պարեր,
- ազգային խաղեր,
- աստղադիտում,
- վերադարձ մեկնարկային վայր:

«Սարվոր տուրիզմ»-ն առաջարկում է տուրեր գիշերակացով և առանց գիշերակացի:

Գիշերակացի դեպքում զբոսաշրջիկները հնարավորություն ունեն գիշերելու կամ վագոն-տնակներում, կամ վրաններում: Վրանները գիտարշավային վրաններ են, որոնք նախատեսված են մինչև -25 ^{0} սառնամանիքային եղանակներին դիմակայելու համար:

«Սարվոր տուրիզմ»-ը նպաստում է բնության և բնակչության միջև կապի ամրապնդմանը: Զբոսաշրջիկները, այցելելով սարվորներին, մնալով նրանց շրջապատում, վայելում են ոչ միայն սարվորների պարզ ու հասարակ կյանքը, նաև վայելում են սարի ջինջ ու մաքուր օդը, անարատ սնունդը և, ի վերջո, ամբողջ Գեղամա լեռների հմայքը: Այս ամենի արդյունքում շահում են և՛ զբոսաշրջիկները, և՛ սարվորները, և՛ Գավառի տարածաշրջանի ողջ բնակչությունը, քանի որ «Սարվոր տուրիզմ»-ում ընդգրկված են ոչ միայն սարվորներ, այլև մեղվապահներ, խաչքարագործներ, տիկնիկագործներ, գորգագործներ, դարբին, հրուշակագործներ, խոհարարներ, որոնք զբոսաշրջիկների նախընտրությամբ կազմակերպում են համապատասխան վարպետաց դասեր[3]:

«Սարվոր տուրիզմ»-ն ունի պաշտոնական կայքէջ՝ http://sarvor.com/, ֆեյսբուքյան էջ՝ https://www.facebook.com/sarvortourism, որոնց միջոցով ցանկացողները կարող են ծանոթանալ «Սարվոր տուրիզմ»-ի գործունեությանը:

Ներկայումս, երբ աշխարհը պայքարում է վիրուսային հիվանդությունների դեմ, մարդկանցից հեռու, հանգիստ և անաղարտ բնության մեջ հանգստանալը մարդկանց համար դառնում է առաջնային: Հատկապես պահանջարկը մեծանում է հենց հայաստանյան քաղաքացիների շրջանում, քանի որ արտասահմանյան երկրներ այցելության սահմանափակումները, միևնույն ուղղություններից հոգնած լինելը, նոր զգացողությունների փնտրտուքն ու իրենց երկրում նոր հանգստանալը ստիպում են մարդկանց ընտրել նոր ու ավելի հետաքրքիր առաջարկներ:

Շատերը գիտակցելով, որ զբոսաշրջության զարգացումը կարող է եկամուտների աղբյուր հանդիսանալ, փորձում են ներխուժել զբոսաշրջային շուկա՝ հաշվի չառնելով ոչ՛ զբոսաշրջիկների պահանջմունքները, ո՛չ բնական միջավայրի պահպանությունը: Չկազմակերպված ձևով զբոսաշրջային հոս-

[3] www.sarvor.com

քերի ավելացումը ոչ միայն չի նպաստում տարածաշրջանի զարգացմանը, այլև հանգեցնում է զբոսաշրջային ռեսուրսների վատնմանը: Այդ պատճառով պետք է ցուցաբերել համակարգված և մասնագիտական մոտեցում:

Չկազմակերպված, չկարգավորված ձևով զբոսաշրջության զարգացումը կարող է հանգեցնել այնպիսի խնդիրների առաջացման, ինչպիսիք են.

- ռեկրեացիոն ռեսուրսների վատնումը,
- հողերի դեգրադացիան,
- ջրային ռեսուրսների աղտոտումը,
- բուսական և կենդանական աշխարհի վտանգում և այլն:

Եզրակացություն: Այսպիսով, «Սարվոր տուրիզմ»-ը՝ որպես հայաստանյան շուկայում այլընտրանքային զբոսաշրջային արտադրանք, ունի մեծ պոտենցիալ՝ զբոսաշրջային հոսքերի ներգրավման համար, որն էլ կարող է նպաստել տարածաշրջանի զարգացմանը՝ չխախտելով բնական միջավայրի հավասարակշռությունը: Այն հեռանկարային ուղղություն է և հետագայում իր գործունեությունը կարող է ծավալել ամբողջ Գեղարքունիքի մարզում՝ ընդգրկելով բոլոր լեռնային շրջանները:

«Սարվոր տուրիզմ»-ն իրենից ներկայացնում է զբոսաշրջության այնպիսի տեսակ, որն ունի սոցիալական, բնապահպանական և մի շարք այլ բաղադրիչներ: Այն նպաստելու է.

- Գավառի տարածաշրջային զբոսաշրջային ներուժի բացահայտմանն ու տարածմանը, տարածաշրջանում զբոսաշրջային հոսքերի ավելացմանը, տարածաշրջանի զարգացմանը,
- սարվորների արտադրանքի իրացմանը, նրանց ֆինանսական հոսքերի ավելացմանը,
- տարածաշրջանի վարպետների՝ խաչքարագործ, դարբին, գորգագործ, տիկնիկագործ, հրուշակագործ, խոհարար և այլ մասնագիտության տեր մարդկանց բացահայտմանը, վարպետաց դասերի կազմակերպմանը, ազգայինի պահպանմանն ու տարածմանը՝ նպաստելով նաև նրանց ֆինանսական հոսքերի ավելացմանը,
- բնական միջավայրի պահպանությանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Кастельс М., Информационная эпоха экономике общество и культуре. М., ГУ ВШЭ, 2000, с. 81

2. Бурменко Т., Даниленко И., Туренко Т., Сфера услуг в современном обществе: Экономика мененджмент и маркетинг, М., 2004 с. 18
3. А. В. Бабкин, Специальные виды туризма, учебное пособие, 2008.
4. https://airinsail.ru/dzhajloo-turizm-chto-eto-takoe/
5. www.sarvor.com

"SARVOR TOURISM" AS A NEW TOURIST DESTINATION

MKRTCHYAN LALA
Lecturer of Gavar State University
e-mail: l.mkrtchyan@gsu.am

This first in its type, unique experiential tourism offered in Armenia, allows tourists to share the daily life of mountain dwellers, living with them in the mountains and familiarising with their routine.

In the article, the history of creation, development and main activities of "Sarvor Tourism" was described.

The aim of the work is to present "Sarvor Tourism/Livestock keepers Tourism" as a new tourist destination. Despite the fact that this tourist destination has been operating for 3 years, the majority of the population is still unaware of it. Many people are not even familiar with the word "sarvor". That is why the dissemination of information about "Sarvor Tourism/Livestock keepers Tourism" can contribute to the development of this unique, interesting, safe and powerful type of tourism.

Thus, "Sarvor Tourism", as an alternative tourism product in the Armenian market, has a great potential for attracting tourism flows, which can contribute to the development of the region without disturbing the balance of the natural environment. It has social, ecological and a number of other components that will contribute:

- Identification and dissemination of Gavar regional tourism potential, increase of tourist flows in the region, development of the region. According to the Facebook page of "Sarvor Tourism" website, the tourism potential of Gavar region has already been revealed and presented. However, this process is still ongoing, as there are still many interesting and undiscovered places.
- Sales of mountaineering products, increase of their financial flows,
- Identifying the masters of the region, organizing master classes, preserving and spreading the national, contributing to the increase of their financial flows;
- Preservation of the natural environment.

Keywords: *"Sarvor tourism", ecotourism, agrotourism, extreme tourism, overnight stay, campaigns, "Jaylo tourism", tourism potential.*

"САРВОР ТУРИЗМ" КАК НОВАЯ ТУРИСТИЧЕСКАЯ ДЕСТИНАЦИЯ

МКРТЧЯН ЛАЛА
Преподаватель Гаварского государственного университета
электронная почта: l.mkrtchyan@gsu.am

"Сарвор Туризм" до сих пор является уникальным видом экспериментального туризма на армянском рынке, в рамках которого туристы имеют возможность организовать свой отдых с временно проживающими в горах горцами, скотоводами, познакомиться с их жизнью и бытом.

В ходе работы была описана история создания, развития и основная деятельность «Сарвор Туризма».

Цель работы – представить «Сарвор Туризм» как новое туристическое направление. Несмотря на то, что это туристическое направление работает уже 3 года, большая часть населения до сих пор о нем не знает. Многие люди даже не знакомы со словом «сарвор». Именно поэтому распространение информации о «Сарвор Туризм» может способствовать развитию этого уникального, интересного, безопасного и мощного вида туризма.

Таким образом, «Сарвор Туризм», как альтернативный туристический продукт на армянском рынке, имеет большой потенциал для привлечения туристических потоков, что может способствовать развитию региона, не нарушая баланса природной среды. Он имеет социальный, экологический и ряд других компонентов и будет способствовать:

- раскрытию и распространению туристического потенциала Гаварского региона, увеличению туристических потоков в регионе, развитию региона. Из страницы сайта «Sarvor Tourism» в Facebook мы узнаем, что туристический потенциал Гаварского региона уже раскрыт и представлен. Однако этот процесс все еще продолжается, так как остается еще много интересных и неизведанных мест.
- реализации продукции сарвора, увеличению их финансовых потоков.
- организации мастер-классов, выявлению мастеров региона – варпетов хачкаров, кузнецов, ковроделов, кукловодов, кондитеров, поваров и других профессий, сохранению и распространению всего национального, тем самым способствуя увеличению их финансовых потоков.

- охране окружающей среды.

Ключевые слова: «Сарвор туризм», экотуризм, агротуризм, экстремальный туризм, ночлег, походы, «Джайло туризм», туристический потенциал, ночлег.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 13.04.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 16.04.2022թ.: